



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ N° 24-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ
ՆՍԱԾՐՋԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնա-
կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածներով

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1.Ապարան համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 19-ի առաջին նստաշրջանի երկրորդ նիստի
օրակարգը հաստատելու մասին

(զեկուցող՝ Կ. Եղիազարյան)

2.Ապարանի համայնքապետարանի ներքին աուդիտի 2023 թվականի տարեկան հաշվետվության մասին

(զեկուցող՝ Ս. Մուրադյան)

3.Ապարան համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման մասին

(զեկուցող՝ Կ. Եղիազարյան)

4. Ապարան համայնքի 2024թ. տարեկան աշխատանքային պլանում /ՏԱՊ/ լրացումներ և
փոփոխություններ կատարելու մասին

(զեկուցող՝ Հ. Մկրտչյան)

5. Ապարան համայնքի բյուջեի ֆոնդային մասում ավելացումներ, վարչական մասում փոփոխություններ
կատարելու և Ապարան համայնքի ավագանու 22.12.2023թ. N 161-Ն որոշման մեջ փոփոխություններ
կատարելու մասին

(զեկուցող՝ Ս.Շերիկյան)

6. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն բնակավայրի վարչական սահմաններում
գտնվող Շողակն տուֆերի երևակման «Ամառանոց» տեղամասում «ՍԵՎԱՐՏ» սահմանափակ
պատասխանատվության ընկերությանը երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու
համաձայնություն տալու մասին

(զեկուցող՝Ա.Կարապետյան)

7. Ապարանի համայնքապետարանի կողմից N ՀՀ-ԱՄ-ԱՀ-ԳՀԱՇՁԲ-16/24 ծածկագրով Ապարան
համայնքի Ապարան քաղաքի ժամանակակից արվեստի քանդակների պուրակի բարեկարգման և
պանթեոն մոտեցնող ճեմուղու կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման պահանջը
դադարեցնելու մասին

(զեկուցող՝ Հ. Հովսեփյան)

8. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի սեփականություն
համարվող գույքի՝ 2023 թվականի գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

(զեկուցող՝Ի.Թադևոսյան)

9. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի 2024 թվականի հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

10. Ապարանի համայնքապետարանի աշխատակիցների վարքագծի կանոնները հաստատելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

11. Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Ապարան համայնքին հատկացված սանիտարական տեխնիկական համայնքային սեփականություն ճանաչելու և այն Ապարան համայնքի կոմունալ ծառայություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով շահագործման հանձնելու մասին

(զեկուցող՝ Ի.Թադևոսյան)

12. 2020թ-ի Արցախյան պատերազմում զոհվածների ընտանիքներին հարկային արտոնություններ տրամադրելու մասին

(զեկուցող՝ Ն.Սիրեկանյան)

13. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Սահակ Ֆահրադի Հայրապետյանի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոխելունու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

14. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Շողակն և Ձորագլուխ բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի գործառնական նշանակությունները փոխելուն հավանություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

15. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Կայք գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականությունը հանդիսացող 02-072-0018-0001 կադաստրային ծածկագրով 0.11881 հա հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոխելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

16. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը կառուցապատման իրավունքով վարձակալության տրամադրելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

17. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող 0.026 հա հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

18. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

19. Ապարան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության տրամադրելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

20. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Եղիպատրուշ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Վահրամ Բենիամինի Փափազյանի սեփականությունը հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը և հողատեսքը փոխելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

21. Ապարան համայնքի Ապարան քաղաքի զբոսայգու տարածքում ֆուտբոլի դաշտի հարևանությամբ ֆուտբոլի խաղադաշտ կառուցելու համար հողամաս հատկացնելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

22. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին
(գեկուցող՝ Ի. Թադևոսյան)

Ավագանի՝

(Կողմ -17),

(Դեմ-0),

(Ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Սաֆարյան Սևակ
Ասատրյան Արամ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Կոստանյան Ժորժ

Համայնքի ղեկավար՝



Կ.Մ.Եղիազարյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ № 25-Ա

ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 17-ի թիվ 143-Ն, 2015թ. դեկտեմբերի 10-ի թիվ 856-Ն հրամանների պահանջները և Ապարանի համայնքապետի կողմից հաստատված 2022-2023թթ ռազմավարական և տարեկան ծրագրերով, ներքին աուդիտի ծառայություն իրականացնող «Օրենք և կարգ» ՍՊ ընկերության կողմից 2023 թ աուդիտ է իրականացվել Ապարանի համայնքապետարանում և համայնքային ենթակայության 6 ՀՈԱԿ-ներում:

Ընդհանուր առմամբ, 2023թ հաստատված ծրագրով պլանավորվել և իրականացվել է 7 աուդիտորական առաջադրանք և 7 վերստուգում: Ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված խախտումների, թերությունների ու բացթողումների վերացման ուղղությամբ անցկացվել են քննարկումներ, հաստատվել են գործողությունների ծրագիր, որը հետևողականորեն իրականացվում է:

Ապարանի համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Ապարանի համայնքապետարանում և 6 ՀՈԱԿ-ներում 2023թ. անցկացված ներքին աուդիտի տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝

ա) հետևողականորեն ավելի բարձրացնել ներքին աուդիտի իրականացման արդյունավետությունը, ապահովել ուսումնասիրությունների անհրաժեշտ խորություն ու բազմակողմանիություն:

բ) ուժեղացնել հսկողությունը կատարված ուսումնասիրությունների ընթացքում բացահայտված խախտումների ու բացթողումների վերացման ուղղությամբ, ձեռնարկել անհրաժեշտ և արդյունավետ միջոցներ հետագայում դրանք բացառելու համար:

3. Որոշման կատարման պատասխանատվությունը ղնել աշխատակազմի քարտուղար Ի. Թադևոսյանի վրա:

Ավագանի՝

(Կողմ – 19),

(Դեմ-0),

(Ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Սաֆարյան Սևակ
Ասատրյան Արամ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Կոստանյան Ժորա
Սարգսյան Սուրեն

Համայնքի ղեկավար՝



Կ.Մ.Եղիազարյան

ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի ներքին աուդիտի աշխատանքների 2023թ. տարեկան հաշվետվություն

Տարեկան հաշվետվությունը կազմվել է ՀՀ Ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանի 306-րդ կետի աղյուսակ 23-ով սահմանված կառուցվածքով: ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի ներքին աուդիտի ծառայություններ մատուցելու համար հայտարարված 2023թ մրցույթում հաղթող է ճանաչվել «Օրենք և Կարգ» ՍՊԸ-ն, որի հետ 19.07.2023 թվականին կնքվել է աուդիտորական ծառայությունների գնման պայմանագիր: Հաշվետվությունն ընդգրկում է 2023թ. ներքին աուդիտի հաստատված ծրագրով նախատեսված աշխատանքների կատարողականը, որի նպատակն է համեմատել ներքին աուդիտի բաժնի կատարողականը՝ ներքին աուդիտի տարեկան ծրագրի հետ, բացահայտել շեղումները և վեր հանել դրանց պատճառները: 2023թ. ներքին աուդիտի հաստատված ծրագրով կատարողականի և ներքին աուդիտի ծրագրի միջև շեղումներ չեն եղել, ներքին աուդիտի հաստատված ծրագիրը կատարվել է ամբողջությամբ, արդյունքները սահմանված ժամկետներում ներկայացվել է համայնքապետին:

2023թ. ներքին աուդիտի հաստատված ծրագրով պլանավորվել ու իրականացվել է 7 աուդիտորական առաջադրանք և 7 վերստուգում:

2023թ. տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ Արագածոտնի մարզի Ապարանի համայնքապետարանի ներքին աուդիտի ծառայություններն իրականացնող «Օրենք և Կարգ» ՍՊԸ-ի կողմից 7 միավորներում իրականացվել է աուդիտ, որից 3 մանկապարտեզ, 1 արվեստի դպրոց, 1 գրադարան, 2 համայնքապետարանի բաժին, (Ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական բնույթի տեղեկություններում և հաշվապահական հաշվառման գրանցումներում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, քաղաքաշինության և հողաշինության բաժին աճուրդներ):

Վերոնշյալ կազմակերպություններում ներքին աուդիտի ստանդարտների համաձայն՝ բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները: Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանն առնչվող բոլոր էական ըստ ծավալի և բնույթի գործառույթները:

Քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, որոնց արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ, ՀՈԱԿ-ների տնօրեններին տրվել են համապատասխան հանձնարարականներ և ժամկետներ՝ արձանագրված խախտումների և թերությունների վերացման նպատակով:

Ներքին աուդիտի բաժնի կողմից բոլոր էական կետերով /ամբողջությամբ/ կատարվել է 2023թ. ծրագիրը 100%-ով:

2023թ. ընթացքում ներքին աուդիտի հաստատված ծրագրով իրականացվել է թվով 7 աուդիտի առաջադրանք: Հաստատված ծրագրի և փաստացի իրականացված առաջադրանքների միջև շեղումներ չկան: 2023 թվականի արդյունքներն ամփոփելով, ներքին աուդիտի կատարման ընթացքում բացահայտված ռիսկերը աուդիտի ենթարկվող միավորների կողմից թերի կամ անարդյունավետ կառավարման հետևանքով թույլ տրվող խախտումների ու թերությունների արդյունք են, որոնք ենթակա են շտկման:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ի.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղդամյան 26, Հեռ. (0252)2-43-93
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ № 26-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ
ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի, «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի պահանջների.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

- Հաստատել Ապարան համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ համայնքի 2023թ բյուջեի կատարման վերաբերյալ՝ համաձայն N 1 N 2 հավելվածների:
- Համայնքի ղեկավար պարոն Կ. Եղիազարյանին՝
 - Անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի 2024թ. վարչական և ֆոնդային բյուջեների կատարումն ապահովելու ուղղությամբ:
 - Հետևողական աշխատանքներ ծավալել և վարչական միջոցներ ձեռնարկել տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների վճարումից խուսափողների նկատմամբ, նվազագույնի հասցնել ապառքները:
 - Ապահովել համայնքի զարգացման և տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների ամբողջական իրականացումը, այդ աշխատանքներում ապահովելով անհրաժեշտ հրապարակայնություն և թափանցիկություն:

Ավագանի՝

(Կողմ – 19),
Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկադի
Պետրոսյան Գոռ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Սաֆարյան Սևակ
Ասատրյան Արամ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Կոստանյան Ժորա
Սարգսյան Սուրեն

(Դեմ-0),

(Ձեռնպահ-0)

Համայնքի ղեկավար՝



Կ.Մ.Եղիազարյան

**ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝
ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ապարան համայնքի 2023 թ գործունեությունը նպատակաուղղված է եղել համայնքի 2023 թ բյուջեի կատարումն ապահովելու և դրա միջոցով 2023 թ ՏԱՊ ծրագրում ներառված՝ համայնքի կենսագործունեության բոլոր ուղղությունների բնականոն գործունեությունն ու բնակավայրերում առկա առաջնային խնդիրների լուծմանը, բնակավայրերի կայուն և համաչափ զարգացման ապահովմանը: Ապահովվել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը՝ համայնքային կայքի, սոց. ցանցերի և բնակչության հետ ամենօրյա հանդիպումների միջոցով: Ավագանու որոշումները, համայնքապետի որոշումներն ու կարգադրությունները, համայնքի բյուջեն, բյուջեի կատարողականները, համայնքապետարանի գործունեության հիմնական ուղղություններն մշտապես լուսաբանվել են համայնքային կայքում, որը հասու է եղել համայնքի բոլոր բնակիչներին: 2023 թ ընթացքում կայացել է ավագանու 20 նիստ, ընդունվել են 177 որոշումներ: Ընդունվել են համայնքապետի 1288 որոշումներ, 351 կարգադրություններ: Տարվա ընթացքում հետևողական աշխատանքներ են սեփական եկամուտների ապահովման հնարավոր աղբյուրների համալրման, տեղական հարկերի, տուրքերի և վճարների գանձման և համայնքային խնդիրների լուծման սերտ կապի գիտակցման անհրաժեշտության վերաբերյալ բնակչության շրջանում բացատրական աշխատանքների ծավալման և զարգացման ուղղությամբ: Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել անշարժ և շարժական գույքերի հաշվառման շտեմարանների ճշտգրման, տեղական տուրքերի և վճարների սահմանման ու ճիշտ հաշվարկման, համայնքային եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճշգրիտ արտահայտման և այդ ուղղությամբ հարկատուների/բնակիչների/ շրջանում տարվող աշխատանքների ակտիվացման, նրանց իրազեկվածության բարձրացման, հրապարակայնության ու թափանցիկության ապահովման ուղղությամբ: Դրանց շնորհիվ շտեմարանները դարձել են ավելի կառավարելի և վերահսկելի, հասանելի բոլոր հարկատուներին ու բնակիչներին: Արդյունքում՝ օրեցօր արձանագրվում են պարտաճանաչ հարկատուների թվաքանակի աճ, ինչպես նաև եկամուտների ապահովման չափերի համաչափ ավելացման դրսևորումներ: Սեփական եկամուտների հավաքագրման գործում տարվում են ամենօրյա օպերատիվ հաշվառում և վերլուծություն, բացատրական և նախազգուշական աշխատանքներ: Սահմանվել են ամենամսյա հաշվետվությունների ներկայացման և ամփոփման, դրանց արդյունքներից բխող քայլերի կառավարման համակարգ: 2023 թ համայնքի վարչական բյուջեն կատարվել է 100,5 %-ով:

Համայնքի 2023 թ բյուջեի ձևավորման աղբյուրները և կատարված ցուցանիշները՝

Եկամտատեսակներ	Պլան /հազ. դրամ/	Կատարված	Կատ. %
ՀՀ կառավարության կողմից տրված դոտացիա	707.052.800	707.052.800	100
ՔԿԱԳ բաժնի պահպանման ծախսեր	2.227.200	2.227.200	100
Արվեստի դպրոցին տրված սուբվենցիա	1.961.000	1.961.000	100
Մանկապարտեզների սաների վճարի փոխհատուցում	1.754.200	1.754.200	100
Համայնքի սեփական եկամուտներ	399.400.000	404.740.120	101,3
Ընդամենը վարչական բյուջեն՝	1.112.395.200	1.117.735.320	100,5

2023 թ բյուջեի սեփական եկամուտների պլանը կատարվել է 101,3 %-ով:

N	ԵԿԱՄՏԱՏԵՍԱԿՆԵՐ	Պլան /հազ.դրամ/	Կատարված /հազ.դրամ/	Կատարման %
1	Հողի հարկ	18.804,0	22.789,66	122,0
2	Գույքահարկ /փոխադրամիջոցի	164.072,0	169.641,96	103,4
3	Անշարժ գույքի հարկ	73.230,0	63.324,28	86,5
4	Հողի և գույքի վարձավճար	51.854,0	48.998,05	94,5
5	Գույքահարկ/շենք, շինություն/	3.690,0	8.178,2	222
6	Տուրքեր և վճարներ	46.800,0	59.581,46	127,3
7	Վարձավճարներ /աղբահանություն, խմելու ջուր/	41.150,0	32.229,52	78,3
Ընդամենը վարչական բյուջե՝		399.400,0	404.740,12	101,3
Կապիտալ գործառույթներից մուտքեր՝		400.000.000	345.368.806	86,34

2023 թ համայնքի բյուջեի սեփական եկամուտները պլանավորված է եղել 350.000.000 միլիոն դրամ, սակայն տարևերջին անհրաժեշտությունից ելնելով այն ավելացվել է 49.400.000 դրամով և կազմել՝ 399.400.000 դրամ, փաստացի կատարվել է 404.740.120 դրամ, կամ կատարվել է 101,3 %-ով:

Ընթացիք հարկերի վճարմանը համընթաց դրական միտումներ են նկատվում նախորդ տարիների պարտքային պարտավորությունների նվազեցման ուղղությամբ, նաև որի արդյունքում 2022 թ համեմատությամբ 2023 թ-ին հավաքագրման ցուցանիշը գերազանցել է 25%-ի չափով:

2023 թ պլանավորված ցուցանիշը չի կատարվել Արագած և Ծաղկաշեն բնակավայրերում:

Առանձնակի դիտարկման խնդիր ունեն աղբահանության և խմելու ջրի մատակարարման ծառայությունների վարձավճարների գանձումների վիճակը, որոնք գյուղական բնակավայրերի համար հանդիսանալով խոշորացումից հետո կիրառվող գանձումներ, հաճախ առաջացնում են դժվարություններ:

Չնայած դրան, ձեռնարկվող քայլերը տալիս են դրական արդյունքներ: Այսպես, 2023 թ աղբահանության և խմելու ջրի վարձավճարների գանձումը կատարվել է 78,3 %-ով, որը զգալիորեն գերազանցում է նախորդ տարիների ցուցանիշները, ինչը կարևոր և դրական ձեռքբերում է :

Աղբահանության վարձավճարների մասով՝ գանձված 21.299.183 դրամից 11.362. դրամը՝ 53,35 %-ը բաժին է ընկնում Ապարան քաղաքի աղբահանությանը, իսկ գյուղական 21 բնակավայրերում ընդհանուր հավաքագրումը կազմել է 9.936.577 դրամ, կամ՝ 46,65 %՝ նախորդ տարվա նկատմամբ 2.557.060 դրամ, կամ՝ 34,65 % ավելի, ինչը նույնպես գնահատվում է որպես դրական միտում:

Աղբահանության վարձավճարի պլանը կատարել են՝ Եղիպատրուշ, Մելիքգյուղ, Շենավան գյուղերը: Վիճակի բարելավմանը լրջորեն չեն մոտենում Քուչակ, Վարդենիս, Արագած, Կայք, Ջրամբար, Շողակն գյուղերում: Այդ գործում անբավար է „Ապարանի բժշկական կենտրոն” ՓԲԸ, Փրկարար ծառայության, „Շահաստան”, ՍՊԸ, „ Ապարան գագ” ՍՊԸ, „Հայփոստ” ՓԲԸ, „Ապարանի պանրի գործարան” ՓԲԸ, մի շարք անհատ ձեռնարկատերերի վերաբերմունքը, որոնց նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ:

Խմելու ջրի վարձավճարների հավաքագրման մասով՝ պլանավորված 13.050.000 դրամի դիմաց գանձվել է 10.930.336 դրամ, կամ կատարվել է 83,76 %-ով, որը նախորդ տարվա ցուցանիշը գերազանցում է 2.836.406 դրամով, կամ աճը կազմել է 35,04 %, դրական առաջընթացն նկատելի է:

Նախատեսված առաջադրանքը կատարվել է Մելիքգյուղ, Հարթավան, Երնջատափ, Նիգավան, Ծաղկաշեն, Ջրնաղ, Ձորագլուխ, Թթուջուր, Արայի, Շողակն գյուղերում:

Վիճակն վատ է Եղիպատրուշ, Վարդենիս, Վարդենուտ, Ջրամբար, Լուսագյուղ, Քուչակ գյուղերում, որոնցում գանձումները կազմել են 17-ից 34 %, կամ միջին ցուցանիշի կեսից պակաս, որն ինքնին դատապարտելի վերաբերմունք և մոտեցում է մատուցվող ծառայության հանդեպ:

Բավական է նշել, որ միայն խմելու ջրի ծառայության անմիջական սպասարկողների /փականագործ-կարգավորիչների/ աշխատավարձի ֆոնդը տարեկան կազմել է 22.350.000 դրամ:

Ապարանի կոմունալ ծառայություն ՀՈԱԿ և վարչական ղեկավարները վերը նշված բացթողումների շտկման և կարգավորման ուղղությամբ լուրջ և հետևողական աշխատանքի կարիք ունեն:

Շենավան, Վարդենուտ, Հարթավան, Արայի բնակավայրերում արմատական բարելավան կարիք ունեն գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալությունների տրամադրման և վարձավճարների հավաքագրման ուղղությամբ տարվող աշխատանքները: Շատ վարձակալներ տարիներ շարունակ չվճարելով վարձավճարները, չունենալով օրինական ձևակերպումներ՝

շարունակելով տնօրինել հողամասերը: Նախկինում կիրառված սխալ գործելակերպը, համաձայն որի՝ նույն հողատարածքի առանձին հատվածներ տնօրինվում են տարբեր քաղաքացիների կողմից, սակայն ձևակերպված են մեկ անձի անունով, գործել է կոլեկտիվ վարձակալման սկզբունքը, որի հետևանքով չնայած հողամասերի վարձակալության ժամկետների անցման՝ շարունակում են առանց հիմնավոր փաստաթղթերի օգտագործվել, վերանայման խիստ կարիք ունեն նաև վարձավճարների չափերը: 31.12.2023 թ դրությամբ վարձակալության մեջ գտնվող հողամասերի վարձավճարների գծով ապառքը կազմում է՝ 22.216.463 դրամ:

Խնդրի հիմնարար կարգավորմամբ պետք է լրջորեն զբաղվեն համայնքապետարանի գյուղատնտեսության բաժն, գլխավոր հողաշինարարը և վարչական ղեկավարներ:

Խնդրի կարգավորման հնարավոր ուղղություններից կարող է հանդիսանալ նախապատվություն ունեցողների նկատմամբ վարձակալությունների վերաձևակերպման տարբերակը:

Հարկ է ընդգծել, որ հարկերի գանձման աշխատանքներն ավելի պատշաճորեն կատարելու, ապառքները նվազագույնի հասցնելու գործում առկա են մի շարք օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառներ:

Դեռևս մեծ թիվ են կազմում մահացած հարկատուների ժառանգություն չբացողները, բնակավայրից երկար տարիներ բացակայողները, որոնց ապառքները կազմում են ընդհանուր ապառքների 20-25%: 2021 թ-ից սկսած հարկային բազայի հաշվառումից դուրս մնացած հարկատուներ կան, ովքեր մինչև օրս իրենց սեփականությունները չեն գրանցել և չեն ստացել պետական գրանցում:

Դեռևս քիչ չեն նաև տարբեր պատճառներով հարկերը ժամանակին չվճարողները:

Նմանների մոտ բացակայում է համայնքի նկատմամբ պատասխանատվության և քաղաքացիական պարտքի զգացումը, փոխարենը՝ կարիքի դեպքում ավելանում են պահանջատիրական միտումները:

2023 թ ընթացքում համայնքապետարանի աշխատակազմի կողմից անպարտաճանաչ հարկատուների նկատմամբ հարուցվել են 119 վարչական վարույթներ, որոնցից 92-ն ուղարկվել են հարկադիր

կատարման ծառայությունների վարույթ՝ ապահովելու շուրջ 32,0 միլիոն դրամի ընդհանուր գանձում,

նման կերպ գանձումները շարունակվում են: Զգալի քանակի հարուցված գործեր կան նաև նախկինից:

Չնայած տեղական տուրքերի և վճարների պլանը կատարվել է 127,3 %, սակայն շարունակում է խնդիր մնալ դրանք սահմանված ժամկետում՝ մինչև գործունեության ծավալումը, վճարելու և համապատասխան թույլտվությունը ժամանակին ստանալու հանգամանքը:

31.12.2023 թ դրությամբ ֆիզիկական և իրավաբանական անձանց հողի հարկի ապառքները կազմել են՝ 72.432.944 դրամ, շենք-շինություններինը՝ 11.129.372 դրամ, փոխադրամիջոցներինը՝ 36.076.156 դրամ, ընդհանուրը՝ 119.638.472 դրամ:

31.12.2022 թ դրությամբ անշարժ գույքի հարկերի ապառքները կազմել են՝

Ֆիզիկական անձանց՝ 66.603.374 դրամ, տույժերը՝ 8.437.142 դրամ, ընդամենը՝ 75.040.516 դրամ:

Իրավաբանական անձանց՝ 2.088.853 դրամ, տույժերը՝ 290.134 դրամ, ընդամենը՝ 2.378.987 դրամ: Գույքահարկի մասով՝

Ֆիզիկական անձանց՝ 74.313.129 դրամ, տույժը՝ 7.715.358 դրամ, ընդամենը՝ 82.028.487 դրամ:

Իրավաբանական անձանց՝ 2.684.077 դրամ, տույժը՝ 293.907 դրամ, ընդամենը՝ 2.977.984 դրամ:

2021-2022-2023 թթ ֆիզիկական և իրավաբանական անձանց անշարժ և շարժական գույքերի հարկային պարտավորությունների ընդհանուր ապառքը կազմել է 145.689.433 դրամ:

Ընդ որում, 2023 թ տարեկան հաշվարկային ապառքը կազմել է 265.327.905 դրամ՝ նախորդ տարվա 219.533.700 դրամի դիմաց:

Հողի հարկի /մինչև 2021 թ/, և 2021-2023 թթ անշարժ և շարժական գույքերի հարկերի ընդհանուր ապառքը /առանց տույժերի/ կազմում է՝ 265.327.905 դրամ:

Հարկատուներին խրախուսելու նպատակով սոցիալապես կարիքավոր 174 հարկատուների՝

9.258.926 դրամի չափով, տրամադրվել են հարկային արտոնություններ:

Համայնքի 2023 թ բյուջեն ծախսային մասով կատարվել է 97,4 %-ով:

Վարչական մասով տարեկան պարտքային պարտավորությունները կազմել են 34.481.869 դրամ, Իսկ ֆոնդային մասով՝ 471.317.961 դրամ, որը հանդիսանում է բյուջեի փաստացի դեֆիցիտ:

Բյուջեի ծախսային քաղաքականության ոլորտում հիմնական խնդիրը կապիտալ գործառնությունների կանխատեսելիության և փաստացի կատարման միջև առկա անհամապատասխանություններն են: Համայնքում հողերի կառավարման ծրագրի անկանոն և տարերային վարումը զգալիորեն խոչընդոտում է իրացման ենթակա հողատարածքների ժամանակին օտարմանը՝ համայնքի ֆոնդային բյուջեի համալրման օպերատիվության ապահովմանը:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված ներդրումային ծրագրերի շրջանակներում գերակա շահ ճանաչված անշարժ գույքերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունների կատարումը պետական գերատեսչություններում հանդիպում է լուրջ խնդիրների և ձգձգումների, խնդրի լուծման ուղղությամբ առկա են մեծաթիվ դատական հայցեր:

2023 Թ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

N	Հոդվածի անվանումը	ՊԼԱՆ Հազ.դրամ	ԿԱՏԱՐՎԱԾ Հազ.դրամ	ԿԱՏԱՐՄԱՆ %
	ԸՆԴՀԱՄԵՆ ԾԱԽՍԵՐ՝	1.784.004.398	1.737.426.965	97,4
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝	480.471.830	438.697.695	91,3
	Որից՝			
-	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարող	309.466.315	290.483.295	93,9
-	Հիմնական խմբին չդասվող պարտքային պարտավորություն	137.085.315	118.813.008	86,7
-	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	31.697.500	27.178.692	85,7
-	ՔԿԱԳ բաժնի պահպանում	2.222.700	2.222.700	100,0
2	Պաշտպանություն	0	0	0
	Որից՝			
	Պաշտպանություն (այլ դասին չպատկանող)	0	0	0
3	Տնտեսական հարաբերություններ	380.680.940	379.944.646	99,8
	Որից՝			
	ճանապարհային տրանսպորտ	380.680.940	379.944.646	99,8
4	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն	624.634.653	621.687.060	99,5
	Որից՝			
-	Բնակարանային շինարարություն	249.990.543	248.431.324	99,4
-	Ջրամատակարարում և կոյուղի	11.200.200	10.537.420	94,1
-	Բնակ.շինարարություն և կոմունալ ծառայություն	299.810.313	299.810.313	100,0
-	Արտաքին լուսավորություն	63.633.597	62.908.003	98,9
5	Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի մասով	45.261.485	45.150.040	99,8
	Որից՝			
-	Սպորտային ծրագրեր	2.155.985	2.144.600	99,5
-	Գրադարանի մասով	10.861.000	10.861.000	100,0
-	Մշակույթի մասով	32.244.500	32.144.440	99,7
6	Կրթության բնագավառի մասով՝	245.705.500	244.848.924	99,7
	Որից՝			
-	Նախադպրոցական կրթության բնագավառի մասով՝	136.539.200	135.858.324	99,5
-	Արտադպրոցական դաստիարակության բնագավառի մասով	109.166.300	108.990.600	99,8
7	Սոցիալական Պաշտպանություն	7.249.990	7.098.600	97,9
	Որից			
-	Սոցիալական հատուկ արտոնություններ	4.000.000	3.849.600	96,2
-	Սոցիալական կենտրոն	3.249.990	3.249.000	100,0

Վարչական տարածքներում անհանգստացնող խնդիր է բնակչության իրական և փաստացի թվաքանակի անհամապատասխանությունը: 1000-ից ավել քաղաքացիներ առանց հաշվառման բնակվում են բնակավայրերում, օգտվում բոլոր տեսակի ծառայություններից, սակայն նրանց համար պետությունից դոտացիա չի ստացվում: Նաև այդ պատճառով պետության կողմից հատկացվող դոտացիան ճշգրիտ չի արտահայտում համայնքի պահանջարկը: Աշխատանքներ են տարվել սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություններ և

աջակցություն ցուցաբերելու, սոցիալական լարվածությունը հնարավորինս մեղմելու ուղղությամբ: Դրամական աջակցություն են ցուցաբերվել սոցիալապես անապահով ընտանիքների, բուժման կարիք ունեցող քաղաքացիների, ուսանողների, զոհվածների ընտանիքների:

Դրամական օգնություններ են տրվել 80 անձանց՝ 4.000.000 ՀՀ դրամի չափով:

Վարձավճարների գեղջման արտոնություններ են սահմանվել մանկապարտեզներում և արվեստի դպրոցներում՝ ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքիների, զոհվածների երեխաների համար:

Շուրջ 600 երեխաներ անվճար հաճախում են մարզադպրոցներ և մշակույթի կենտրոն:

Համայնքային ենթակայության 14 հանդիսասրահներն իրենց կոմունիկացիաներով /սպասք, գազ, էլ. էներգիա/անվճար տրամադրվել են բնակիչներին՝ տարբեր միջոցառումների կատարման նպատակով:

Ապարան քաղաքում ապահովվել է նորակառույց շենքի բաշխման ու շահագործման աշխատանքները:

2023 թ ընթացքում Ապարան քաղաքի Բաղրամյան 43 և Նժդեհի 7 երկրաշարժի հետևանքով 4-րդ

աստիճանի վթարային շենքերի 38 ընտանիքներ, երկրաշարժի հետևանքով քանդված և խիստ

վթարային 2 սեփական տների բնակիչներ, ինչպես նաև զոհվածների 3 ընտանիքներ, ընդամենը 43

ընտանիքներ, վերաբնակեցվեցին նորակառույց շենքում:

Ամենօրյա հետևողական աշխատանքներ են տարվել Արցախի հանրապետությունից բռնագաղթված

221 ընտանիքների՝ 873 անդամներով, համայնքի 18 բնակավայրերում տեղավորելու, նրանց սոցիալա-

կան, սննդի, տնտեսական, կոմունալ-կենցաղային ամենատարբեր խնդիրների լուծման ուղղությամբ:

31.12.2023 թ դրությամբ նրանց թիվը համայնքում կազմում է՝ 161 ընտանիք՝ 651 անդամներով:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքի բոլոր բնակավայրերի կայուն և համաչափ

զարգացումն ապահովելու ուղղությամբ հաստատված հնգամյան և տարեկան զարգացման ծրագրերի

կատարման ուղղությամբ:

Միաժամանակ, օպերատիվ լուծում են տրվել ի հայտ եկած բոլոր խնդիրներին, որոնցով ապահովվել են

բնակչության պատշաճ սպասարկմանը:

Գնահատելով կատարված աշխատանքներն ու առաջիկա անելիքները, հաղթահարելով առկա պրոբլեմ-

ներն ու դժվարությունները, խնդիր է դրվում պահպանելու ձեռքբերումները և անելու հնարավոր

առավելագույնը ապահովելու բոլոր բնակավայրերի բավարար կենսագործունեությունը, կայուն,

համաչափ և հետևողական զարգացումը:

Համայնքապետարանի գործունեության ապահովման և արդյունավետության բարձրացման գործում

արդյունավետ է եղել ավագանու գործնական և համերաշխ աշխատանքը, խնդիրները համատեղ

ուժերով հաղթահարելու հետևողականությունը, կամքն ու վճռականությունը:

ԱՇԽԱՏԱՎԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ի.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

2023 Թ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԱՏՈՒՑԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

	ԾՐԱԳՐԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝	Բնակավայր	Ծավալ, քանակ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՅՈՒՋԵՆ	Այդ թվում՝ համայնքի մասնաբաժինը	
					Ընդամենը	Որից՝ 2023թ վճարված
	ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ՝					
1	Ներքաղաքային ճանապարհների ասֆալտապատում	Ապարան	26.820քմ	314.338400	157.169.200	57.169.200
2	Ներգյուղական ճանապարհների ասֆալտապատում	18 բնակ.	24.938քմ	447.092390	223.546.195	100.000.000
	Այդ թվում՝					
2.1		Արագած	1029,1 քմ	14.092.250		
2.2		Ափնազյու	750 քմ	11.219.477		
2.3		Արայի	1291 քմ	15.367.720		
2.4		Նիգավան	1126 քմ	35.198.430		
2.5		Լուսազյուղ	588 քմ	13.723.050		
2.6		Սարալանջ	677 քմ	16.594.270		
2.7		Կայք	741 քմ	8.440.150		
2.8		Վարդենիս	3969 քմ	68.127.340		
2.9		Վարդենու	1629 քմ	45.057.079		
2.10		Չքնաղ	678 քմ	11.974.450		
2.11		Թթուջուր	682 քմ	11.230.840		
2.12		Ձորագլուխ	570 քմ	10.949.320		
2.13		Քուչակ	3800 քմ	63.903.300		
		Ք/ Մայթ	800 քմ	7.450.000		
2.14		Հարթավա	536,5 քմ	18.276.300		
2.15		Շենավան	2649 քմ	47.622.790		
2.16		Եղիպատր	593,4 քմ	8.531.930		
2.17		Ծաղկաշեն	725 քմ	11.152.455		
2.18		Մելիքզյուղ	2104 քմ	39.160.490		
3	Նախորդ տարվա մնացորդ՝ գյուղերի ճանապարհների ասֆալտապատման աշխատանքի ավարտ			230.005.447	147.762.408	147.762.408
4	ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ՝					
4.1	Այդ թվում՝ Եղիպատրուշ		13.325 մ	144.022.848	58.206.739	58.206.739
4.2	Թթուջուր-Ձորագլուխ		10265 մ	164.500.000	65.800.000	
5	ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ՝					
5.1	Կառուցվել՝ 75 %	Շենավան	452 քմ	283.689.872	99.291.455	96.315.735
5.2	Կառուցվել՝ 10 %	Արագած	580 քմ	362.254.463	126.789.062	1.800.000
6	Բաղրամյան 25 բնակ.շենքի մուտքերի նորոգում	Ապարան	1424 քմ	15.600.000	15.600.000	3.081.618
7	Նժդեհի 13 ք/2 ֆասադների սվաղում	Ապարան	900 քմ	9.000.000	9.000.000	Շարունակելի
8	Գայի 3ք/2 ֆասադի սվաղ, պատշգամների թիթեղ	Ապարան	1320 քմ	11.892.000	11.892.000	Շարունակելի
9	Մ. Գևորգի 2 ք/2 մուտքերի վերականգնում և պատշգամների թիթեղապատում	Ապարան	236 քմ	9.420.000	9.420.000	Շարունակելի
10	Մ. Գևորգի 2 ք/2 հարակից տարածքում հանգստյան գոտու կառուցում	Ապարան	530 քմ	11.449.435	11.449.435	Շարունակելի
11	Համայնքապետարանի շենքի բակային տարածքի բարեկարգում	Ապարան	1125 քմ	11.128.296	11.128.296	11.128.296
12	Համայնքապետարանի վարչական շենքի նորոգում մասնակի վերանորոգում	Ապարան	498 քմ	8.232.192	8.232.192	Շարունակելի

13	Գիշերային լուսավորություն՝ Բաղրամյան և Զալալյան փողոցներում	Ապարան	62 կետ	11.216.273	11.216.273	11.216.273
14	Գիշերային լուսավորության կառուցում	Երնջատա	16 կետ	2.982.873	2.982.873	2.982.573
15	Համայնքային կենտրոնի վերակառուցում	Արայի	90 քմ	8.061.720	8.061.720	7.264.626
16	Վարչական շենքի և հանդիսասրահի վ/նորոգում	Վարդենու	1430 քմ	38.250.000	38.250.000	19.123.152
17	Վարչական շենքի և հանդիսասրահի վ/նորոգում	Ծաղկաշեն	500 քմ	19.711.476	19.711.476	10.614.796
18	Բնակելի շենքի տանիքի վերանորոգում	Ջրամբար	807	7.880.000	7.880.000	
19	Հանդիսասրահի ջրագծի և սանհանգույցների կառուցում	Ափնագյող	40մ/2 կտ	2.790.840	2.790.840	
20	Խմելու ջրագծի կառուցում	Շենավան	1400 մ	11.200.000	11.200.000	11.200.000
21	Խմելու ջրագծի կառուցում	Շողակն	2171 մ	12.900.000	12.900.000	Շարունակել
22	Վարչական ղեկավարի նստավայրի և մանկական կենտրոնի շենքի կառուցում	Լուսագյող		Դռնոր կազ.	0	0
23	Լեռնադահուկային համալիրի կառուցում	Եղիպատր		Մայլեռ ՄՌ-	0	0
24	Սելաֆատարի կառուցապատում	Ապարան		Պեմբյուջե	0	0

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂՏՈՒՂԱԾ



Ի.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղդամյան 26, Հեռ. (0252)2-43-93
Էլ. փոստ՝ aparanigaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ՄԱՐՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ N° 27-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆՈՒՄ (ՏԱՊ)
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածին համապատասխան.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1. Ապարան համայնքի 2024թ. տարեկան աշխատանքային պլանում կատարել փոփոխություն ներառելով հետևյալ ծրագրերը.

1.1 Գ. Նժդեհի փողոցում ճեմուղու կառուցում (Նկարագրությունը հավելված 1-ում)

1.2 Մ. Բաղդամյան 43 և Գ. Նժդեհի 2 շենքերի քանդում (Նկարագրությունը հավելված 2-ում)

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ավագանի՝ (Կողմ – 19), (Դեմ-0), (Ձեռնպահ-0)

Եղիազարյան Կարեն
Կարապետյան Արկաղի
Ենոքյան Դավիթ
Պետրոսյան Գոռ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Մանուկյան Աղաբեկ
Մխիթարյան Վարդան
Սահակյան Հովհաննես
Գեղամյան Խաչիկ
Երեմյան Աղվան
Սաֆարյան Սևակ
Ասատրյան Արամ
Սարգսյան Արշակ
Կարապետյան Արտյոմ
Դավթյան Արտյոմ
Կոստանյան Ժորա
Սարգսյան Սուրեն

Համայնքի ղեկավար



Կ.Մ.Եղիազարյան

Հավելված 1

Ապարան համայնքի ավագանու
19.03.2024թ. թիվ 27-Ա որոշման

ԱՊԱՐԱՆ ԳԱՄԱՑՆԵՔԻ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ Մ.ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 43 ԵՎ Գ.ՆՏՂԵՅԻ ՓՈՂՈՑԻ
ԹԻՎ 2 ԲԱԶՄԱՔՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԾԵՆՔԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔԱՆԴՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՐԵԿՈՒԹՅՈՒՆԵՐ

- 1.ՕՐՑԵԿՏԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ Բնակելի բազմաբնակարան շենքեր
- 2.ՕՐՑԵԿՏԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՍՑԵՆ
- 2/1.Ապարան համայնքի Ապարան քաղաք Մ.Բաղրամյան փողոց թիվ 43
- 2/2. Ապարան համայնքի Ապարան քաղաք Գ.ՆՏՂԵՅԻ փողոց թիվ 7
- 3.ՕՐՑԵԿՏՆԵՐԻ ՎՅԱՐԱՑՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ 4 –րդ աստիճանի
- 4.ՕՐՑԵԿՏՆԵՐԻ ՔԱՆԴՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՄՔԸ ԳՅ կառավարության 07.12.2023 թ 2146-Ա որոշման 7-րդ կետ

ՔԱՆԴՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳԻՄՆԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

- 1.Մ.ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 43 ԾԵՆՔ
- 1/1.Հարկայնությունը -4 հարկ
- 1/2. Բանդվող տարածքի մակերեսը – 400.0 բմ/մեկ հարկի համար
- 1/3. Ծենքի բարձրությունը առանց տանիքի -12.0 մ
- 1/4. Բանդվող շենքի ծավալը- 4800.0 խմ
- 1/5. Բանդվող տանիքի մակերեսը -300 բմ,
- 1/6. Պատերի կառուցվածքի շինանյութը –բար/ցեմենտի շաղախով
- 1/7. Միջհարկային ծածկը – ե/բետոնյա սալիկներ
- 1/8. Տանիքի ծածկի շինանյութը-մետաղական խառը պրոֆիլի թիթեղ,փայտյա կարկասի վրա
- 2.Գ.ՆՏՂԵՅԻ ՓՈՂՈՑ 7 ԾԵՆՔ
- 2/1.Հարկայնությունը -2 հարկ
- 2/2. Բանդվող տարածքի մակերեսը – 270.0 բմ/մեկ հարկի համար
- 2/3. Ծենքի բարձրությունը առանց տանիքի -7.0 մ
- 1/4. Բանդվող շենքի ծավալը- 1890.0 խմ
- 1/5. Բանդվող տանիքի մակերեսը -300.0 բմ,
- 1/6. Պատերի կառուցվածքի շինանյութը –բար/ցեմենտի շաղախով
- 1/7. Միջհարկային ծածկը – ե/բետոնյա սալիկներ
- 1/8. Տանիքի ծածկի շինանյութը- ալիբաձև ազդոշիֆեր,փայտյա կարկասի վրա

ՔԱՆԴՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

1. Քանդման աշխատանքների անվտանգության ապահովման միջոցառումներ
 - 1/1. Ազգաբնակչության համար հասանելի բոլոր միջոցներով տեղեկատվության տարածում շենքերի քանդման աշխատանքների սկսելու ժամկետի մասին
 - 1/2. Քանդման աշխատանքների կատարում միայն շենքից բնակչության լրիվ տարհանումից հետո
 - 1/3. Քանդվող շենքի անվտանգության գոտիների նշահարում նշված գոտու ամբողջ պարագծով արգելափակող կոնստրուկցիաների , սպիտակ/կարմիր անկյունագծով ժապավենների և հետիոտների ու տրանսպորտային միջոցների տեղաշարժը արգելող ճանապարհային նշաների տեղակայումով , այդ թվում անհրաժեշտության դեպքում նաև երթևեկելի մասով
 - 1/4 Քանդման ժամանակ շրջակա միջավայրի վրա հետևանքները սահմանափակելու նպատակով , փոշի առաջացնող աշխատանքի տեղամասերի պոլիէթիլենային թաղանթներով փակում
 - 1/5. Օբյեկտի քանդելուց առաջացած շինարարական աղբի տեղափոխման երթուղու և կուտակման վայրի ընտրություն , Ապարանի համայնքապետարանի համաձայնությամբ
 - 1/6. Քանդման աշխատանքները սկսելուց առաջ քանդման աշխատանքներում ընդգրկված աշխատողների տեխնիկայի անվտանգ շահագործման և աշխատանքի անվտանգության պահպանման հրահանգավորում
 - 1/7. Նշումներ մինչև 15 մ բարձրության վրա աշխատանքներ իրականացնող վերամբարձ և քանդող մեխանիզմների և նրանց աշխատանքային հրապարակների կազմակերպման մասին
 - 1/8. Քանդման աշխատանքների կազմակերպում շենքերի բակային տարածքների կողմից , քանդման աշխատանքներին խոչնդոտող շինությունների անհրաժեշտության դեպքում տեղափոխման կամ ապամոնտաժման մասին նշումով

ՔԱՆԴՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1. Ինժեներական ենթակառուցյունների և կոմունիկացիաների անջատում գործող ցանցերից
2. Ինժեներական ենթակառուցյունների և կոմունիկացիաների ներքնակարանային ցանցերի ապամոնտաժում
3. Պատուհանների և դռների քանդում- վերաբերվում է երկու հասցեներում գտնվող շենքերին
4. Տանիքի քանդում - վերաբերվում է երկու հասցեներում գտնվող շենքերին
5. Վերնահարկի ծածկի քանդում- վերաբերվում է երկու հասցեներում գտնվող շենքերին
6. Վերնահարկի կրող պատերի և միջնապատերի քանդում - վերաբերվում է երկու հասցեներում գտնվող շենքերին
7. Առաջին հարկի ծածկի քանդում Գ.Նժդեհի փողոց թիվ 7 բնակելի շենք
8. Նախավերջին հարկի ծածկի քանդում - Մ.Բաղրամյան փողոց թիվ 43 շենք
9. Առաջին հարկի պատերի քանդում- Գ.Նժդեհի փողոց թիվ 7 բնակելի շենք
10. Նախավերջին հարկի ծածկի քանդում - Մ.Բաղրամյան փողոց թիվ 43 շենք
11. Երկրորդ հարկի ծածկի քանդում - Մ.Բաղրամյան փողոց թիվ 43 շենք
12. Երկրորդ հարկի պատերի քանդում - Մ.Բաղրամյան փողոց թիվ 43 շենք
13. Աջաջին հարկի ծածկի քանդում - Մ.Բաղրամյան փողոց թիվ 43 շենք
14. Առաջին հարկի պատերի քանդում - Մ.Բաղրամյան փողոց թիվ 43 շենք

15. Բնակելի շենքերի և շին. հրապարակների մաքրում մնացորդային շին. աղբից

16. Տարածքների մակերեսների մեքենայական ուղղում և հարթեցում

4. ՆԱԽԱԳԾԱ/ՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԿԱԶՄԱՆ ՊԱՅՄԱՆԵՐԸ

4/1. Նախագիծը մշակել ՀՀ-ում գործող ստանդարտների, նորմերի, հրահանգների պահանջների համաձայն, աշխատանքների ծավալները հիմնավորված ուսումնասիրման ընթացքում ձեռք բերված ելակետային տվյալների վերլուծության հիման վրա և գործող նորմերին համապատասխան

4/2. Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը ներկայացնել 4 օրինակից, պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո 30 օրյա ժամկետում

4/3 Նախագծում ներառել տվյալներ աշխատանքների կատարման համար պահանջվող լիցենզիային, տեխնիկական միջոցներին, աշխատանքային ռեսուրսներին և մասնագիտական հատկանիշներին ներկայացվող պահանջների վերաբերյալ:

4/4. Նախագիծը (սխեման) և նախահաշիվը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով (ACAD, PDF, 3D ֆորմատներով), ծավալաթերթերը դրամային և տոկոսային արտահայտությամբ հայերեն և ռուսերեն լեզուներով World, ամփոփագրերը և նախահաշիվները նաև Excel ֆորմատով

4/5. Նախագծա-նախահաշվային աշխատանքների կատարման գինը սահմանվում է պատվիրատուի առաջարկությամբ նախահաշվային արժեքի՝ ներառյալ քաղաքաշինական փաստաթղթերով սահմանված նախահաշվի նկատմամբ կիրառվող ավելացումները 2 % : Դրամային արտահայտությամբ հաշվարկը կատարել նախագծի ամփոփ նախահաշվով հաշվարկված նախագծման արժեքից

4/6. Նախագծա-նախահաշվային աշխատանքների վճարումը կատարել դրանք փորձաքննության դրական եզրակացությունից հետո

5. ՆԱԽԱԳԾԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՀԱՆՁՆԵՐ

ա/նախագծային փաստաթղթերի կազմը, բովանդակությունը և նախագծային լուծումները պետք է համապատասխանեն ՀՀ-ում գործող նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի և նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին

6. ՆԱԽԱՀԱՇՎ-ՆԱԽԱԳԾԻ ԵՎ ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՊԱՀԱՆՁՆԵՐ

Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է կազմվեն ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017.թ թիվ 128-Ն հրամանով սահմանված պահանջներին համապատասխան և պետք է ներառեն՝

1. Տվյալներ տեխնիկական բնութագրի առարկայի ոլորտին վերաբերվող նախագծա-նախահաշվային փաստաթղթեր կազմելու լիցենզիա ունենալու մասին :

2. Բացատրագիր /որն իր մեջ կներառի քանդվող տեղամասի վիճակը, հետազոտման արդյունքները, տարածաշրջանի քարտեզը՝ նշելով այն հատվածը որտեղ իրականացվելու են այդ աշխատանքները, աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ մեքենա - մեխանիզմները և ինժեներատեխնիկական մասնագիտական խմբի կազմերը/

3. Գծագրեր/որոնք կներառեն նախագծային լուծումների վերաբերյալ առաջարկությունները և իրականացվող աշխատանքների մասնագրերը/

4. Տեղային նախահաշիվ/որը կներառի տվյալներ աշխատանքի նկարագրի և ծավալների մասին /

5. Համահավաք ամփոփագիր

6. Նախահաշվի հիման վրա կազմված ծավալաթերթ-նախահաշիվ, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից /այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50 %-ը /

8. Աշխատանքների կատարման ժամանակացույց

9. ՀԱՄԱԶԱՅՆՅՈՒՄՆԵՐ

1. ՏԻՄ -ի հետ պահուստի, լցակույտի և շինարարական աղբի տեղերի, վերաբերյալ

2. Արագածոտնի մարզի ԳԳՄ-ի հետ, գազամատակարարման միացման ցանցերի ապամոնտաժման վերաբերյալ

3. ՎԵՈԼԱ-ՋՈՒՐ ՄՊԸ-ի հետ ջրամատակարարման ցանցերի ապամոնտաժման վերաբերյալ

4. ՀԷՑ-ի հետ, հոսանքի մատակարարման գծերի ապամոնտաժման վերաբերյալ

5. ԱԻՆ-ի հետ, ապամոնտաժման տեխնիկական խորհրդատվություն ստանալու վերաբերյալ

10. ՆՈՐՄԱՏԻՎԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011 թ-ի թիվ 879-Ն որոշման սահմանված կարգին համաձայն

2. Նախագծային փաստաթղթերի աշխատանքային գծագրերը մշակել ԳՈՍՏ 21.101-97 ստանդարտներով սահմանված կանոնների և ՀՀ-ում գործող գերատեսչական այլ նորմատիվային փաստաթղթերի համաձայն

3. ՀՀՇՆ 20.06-2014

Հավելված 2

Ապարան համայնքի ավագանու
19.03.2024թ. թիվ 27-Ա որոշման



**ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ Գ.ՆԺԴԵԿԻ ՓՈՂՈՑՈՒՄ ՃԵՄՈՒՂՈՒ
ԿԱՌՈՒՑՄԱՆ**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- 1.ՕԲՅԵԿՏԻ ՀԱՍՏԵՆ- Ապարան քաղաքի Գ.ՆԺԴԵԿԻ փողոցի Պ0+00 – Պ0+380 հատված
- 2.ՕԲՅԵԿՏԻ ՓԱՍՏԱՑԻ ՎԻՃԱԿԸ – ճեմնուղու կառուցման համար առաջարկվող օբյեկտը (հատվածը) հանդիսանում է Ապարան – Լուսազյուղ համայնքային նշանակության S1-44 ճանապարհի Ապարան քաղաքի վարչական տարածքով անցնող Պ0+00 – Պ0+380 հատվածը : Համայնքային նշանակության Ապարան –Լուսազյուղ 3.0 կմ ճանապարհը 2024 թվականին ՀՀկառավարության ֆինանսավորմամբ ընդգրկված է հիմնանորոգվող ճանապարհների ցանկում:ճեմնուղու կառուցման հատվածում այն իրենից ներկայացնում է ասֆալտապատ, 2021-2022 թթ փոսային նորոգման ենթարկված , տրանսպորտային միջոցների երթևեկության համար բավարար որակի ծածկույթով ճանապարհ :
- 3.ՕԲՅԵԿՏԻ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ
- 3/1.Կառուցապատվող տարածքի պարամետրերը – Համապատասխան Լուսազյուղ ավտոճանապարհի կմ0+00 – կմ3+00 հիմնանորոգում աշխատանքային նախագծի
- 3/2.Եսքիզային առաջարկը – Հիմք ընդունել կառուցապատման կից ներկայացվող դիզայն առաջարկը
- 4.ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
- 4/1. ՔԱՆԴՄԱՆ ԱԾԽԱՏԱՆՔՆԵՐ
- ա/ ճանապարհի ասֆալտե ծածկույթը քանդում ըստ կառուցապատման դիզայն առաջարկի միայն կանաչապատման նպատակով առանձնացված տարածքներում(քանդման եղանակի ընտրությունը կատարել , ելնելով գրունտի ամրությունը նվազագույն չափով չխախտելու և գրունտի շերտի բարձրությունը պահպանելու պահանջից),բարձունով ինքնաթափի վրա
- բ/ Քանդված գրունտի տեղափոխում 4 կմ հեռավորության վրա
- գ/ Գրունտի մշակում ձեռքի քանդումով և կողնվցմամբ կանաչապատման գոտու և սալկապատման գոտու բաժանման գծում բետոնե 80*200 մմ չափի եզրաքարեր տեղադրելու համար
- դ/ Գրունտի քանդում փոսերում ձեռքով կամ շերտի փոքր տարողության էքսկավատորով դեկորատիվ տեսակի ծառերի տեղակայման համար կախված նրանց արմատային համակարգի չափերից ,անհրաժեշտության դեպքում բարձունով ինքնաթափ ավտոմեքենայի թափք և տեղափոխումով 4 կմ հեռավորություն
- ե/Գրունտի քանդում ձեռքով կետային հիմքերում և խրամատում դեկորատիվ և գիշերային լուսավորության հենասյուների և ստորգետնյա մալուխագծի տեղակայման համար ,քանդված գրունտի տեղում տարածումով կամ անհրաժեշտության դեպքում բարձունով և տեղափոխում 4 կմ հեռավորություն
- զ/Գրունտի մշակում ձեռքով կետային հիմքերում մետաղական դեկորատիվ ցանկապատի

հենասյուների տեղակայման համար, գրունտի հենասյուների և ստորգետնյա մալուխագծի տեղակայման համար, քանդված գրունտի տեղում տարածումով կամ անհրաժեշտության դեպքում բարձրումով և տեղափոխում 4 կմ հեռավորություն

ե/Գրունտի մշակում խրամատում ջրամատակարարման և ջրի հետադարձի խողովակաշարի կառուցման նպատակով, գրունտի տեղում տարածումով կամինքնաթափով տեղափոխումով 4.0 կմ հեռավորություն

4/2. ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԼՔՆԵՐ

ա/ Յողի (սևահողի կամ շեկահողի) տեղափոխում ճեմուղու կանաչապատվող տարածք, կուտակումով առանձին կետերում

բ/Դեկորատիվ և գիշերային լուսավորության հենասյուների ծանր բետոնով կետային հիմքերում տեղադրումով

գ/ Էլ.հոսանքի մատակարարման ստորգետնյա մալուխագծի կառուցում, պատրաստի խրամատներում, գրունտի հետադարձ լիցք խրամատում

դ/Դեկորատիվ և գիշերային լուսավորության ցանցի մոնտաժում (բաժանարար տուփերի տեղադրում, լուսավորության լամպերի կոթառների միացում հոսանքալարերին, լուսատուների տեղադրում և այլն)

ե/ Ջրամատակարարման և ջրի հետադարձի խողովակաշարի կառուցում, գրունտի հետադարձ լիցք խրամատում : Ցայտադրյուրի (ցայտադրյուրների) տեղադրում

զ/Դեկորատիվ ծառատեսակների տունկ, բներում տեղափոխված հողի լիցքավորումով

է/Պատրաստի մետաղական ցանկապատի մոնտաժում, հենասյուների կետային հիմքերում ծանր բետոնով տեղադրմամբ

ը/ Մետաղական ցանկապատի երկշերտ ներկում

թ/ 80*200 մմ չափսի բետոնից եզրաքարերի շարվածք, սալիկապատվող և կանաչապատվող գոտիների առանձնացման հատվածներում

ժ/Նախապես կուտակված հողի ձեռքով տարածում կանաչապատվող տարածքում, հողի ուղղումով և հարթեցումով :

ի/Յողի փխրեցումից հետո մարգագետնախոտի կամ գազոնախոտի ցանք փոցխումով, /ճեմուղու սալիկապատում, երկրորդ շերտը գունավոր 50-60 մմ հաստությամբ սալիկներով, ցեմենտ/ավազի 1:3 հարաբերակցությամբ պատրաստված խառնուրդով հիմնատակի վրա, կարաների նույն խառնուրդով լցափակմամբ

խ/ճեմուղու կահավորում նստարաններով և աղբամաններով

